




ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ






Էլեկտրաէներգետիկական համակարգի ընկերությունների սակագները հաշվարկվում եւ սահմանվում են «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածով ամրագրված սկզբունքների, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշումներով հաստատված սակագների հաշվարկման մեթոդիկաների եւ կանոնների հիման վրա, ինչպես նաեւ հաշվի են առնվում պետություն-մասնավոր հատված գործընկերության ծրագրերի շրջանակում կնքված համաձայնագրերի պահանջները:





Էլեկտրաէներգիայի արտադրության, հաղորդման եւ բաշխման գործընթացը





- Էլեկտրաէներգետիկական համակարգի խոշոր արտադրող կայանների եւ ծառայություններ մատուցող ընկերությունների սակագները վերջին անգամ վերանայվել եւ ուժի մեջ են մտել 2020 թվականի փետրվարի 1-ից, իսկ սպառողներին վաճառվող Էլեկտրական Էներգիայի սակագները՝ 2017 թվականի փետրվարի 1-ից, բացառությամբ սոցիալապես անապահով սպառողների, որոնց սակագները վերջին անգամ վերանայվել են 2019 թվականի փետրվարի 1-ից:
- Համաձայն «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի՝ Էլեկտրաէներգիայի սակագները կարող են վերանայվել 6 ամսից ոչ շուտ, սակայն ՀԾԿՀ-ն սովորաբար Էլեկտրաէներգետիկական համակարգի խոշոր արտադրող կայանների եւ ծառայություններ մատուցող ընկերությունների սակագները վերանայում է տարեկան արդյունքներով:
- Հաշվի առնելով նշվածը՝ 2020 թվականի սեպտեմբերի 10-ից ՀԾԿՀ-ի նախաձեռնությամբ սկսվել է Էլեկտրաէներգետիկական համակարգի խոշոր արտադրող կայանների, ծառայություններ մատուցողների սակագների եւ ՀԷՑ-ի սակագնային մարժայի վերանայման գործընթաց:






2021թ. փետրվարի 1-ից մինչև 2022թ. փետրվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար Էլեկտրաէներգետիկական համակարգի ընկերությունների սակագների վրա ազդեցություն ունեցող գործոնները դասակարգենք հետևյալ հիմնական խմբերում՝

- Էլեկտրաէներգիայի արտադրության եւ սպառման կառուցվածքի փոփոխություն,
- արտարժույթների նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքի փոփոխություն,
- իրականացված նոր կապիտալ ներդրումների փոխհատուցում մաշվածության եւ շահույթի տեսքով՝ հաշվի առնելով նաեւ կուտակված մաշվածությունը,
- ՀՀ կառավարության երաշխիքով ստացված արտոնյալ վարկերի մայր գումարների մարման եւ սպասարկման ծախսերի փոփոխություն՝ համաձայն վարկային (ենթավարկային) պայմանագրերի ժամանակացույցերի,
- ՋԷԿ-երին վաճառվող բնական գազի սակագնի փոփոխություն,
- Էլեկտրաէներգիայի արտադրության եւ սպառման նախորդ 12 ամիսներին կանխատեսվող եւ փաստացի հաշվեկշիռների շեղման արդյունքում, մեթոդիկայի համաձայն, ձեւավորված փոխհատուցման ենթակա գումար,
- Էլեկտրաէներգիայի բաշխիչ ցանցում կորուստների նվազում,
- Էլեկտրաէներգետիկական համակարգում շահագործման եւ պահպանման ծախսերի նվազում:





Սակագների հաշվարկների հիմքում դրվող Էլեկտրաէներգիայի արտադրության եւ սպառման կանխատեսվող հաշվեկշիռը կազմվում է ՀԾԿՀ-ի 09.08.2017թ. №344Ն որոշմամբ հաստատված Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առեւտրային կանոնների 3-րդ բաժնի համաձայն:





Էլեկտրաէներգետիկական համակարգի 2021թ. սակագների վերանայում

Այսպիսով, 01.02.2021-01.02.2022թթ. ժամանակահատվածի համար կազմված Էլեկտրաէներգիայի արտադրության եւ սպառման հաշվեկշիռը (կառուցվածքի փոփոխությունը) համակարգի վրա ունեցել է **բացասական ազեցություն՝ շուրջ 16.5 մլրդ դրամի** չափով (առանց ԱԱՀ-ի), որը վերջնական **սպառողների վաճառքի միջին սակագինն ավելացնում է 3.41դրամ/կՎտժ-ով** (ներառյալ ԱԱՀ-ն):

Արտադրող կայաններից ներքին շուկայի պահանջարկի բավարարման համար առաքվող Էլեկտրաէներգիայի կառուցվածքի փոփոխությունը

№	Անվանումներ	01.02.2020- 01.02.2021 սակագնային տարի	01.02.2021- 01.02.2022 սակագնային տարի	Տարբերու թյուն
		մլն կՎտժ	մլն կՎտժ	մլն կՎտժ
1	ԸՆԴԱՄԵՆԸ Էլեկրաէներգիայի առաքում, այդ թվում՝	6450.98	6413.95	-37.03
1.1	«ՀԱԷԿ» ՓԲԸ	2501.70	1942.20	-559.5
1.2	«Երեւանի ՁԷԿ» ՓԲԸ (ներառյալ «Արմփաուեր» ՓԲԸ-ից ստացված Էլեկտրաէներգիան)	939.24	537.52	-401.72
1.3	«Արմփաուեր» ՓԲԸ	0	343.96	+343.96
1.4	«Հրազդան-5» կայան	426.80	0	-426.80
1.5	«ՀրազՁԷԿ» ԲԲԸ	150.54	1090.0	+939.46
1.6	«ՄԷԿ» ՓԲԸ	380.00	380.03	+0.03
1.7	«ՔոնթոլրԳլոբալ Հիդրո կասկադ» ՓԲԸ	836.00	941.73	+105.73
1.8	Փոքր կայաններ եւ ներկրում	1216.71	1178.52	-38.19
2	Կորուստները հաղորդման ցանցում	112.26	105.27	-6.99
3	Մուտքը բաշխիչ ցանց	6338.72	6308.69	-30.03





Էլեկտրաէներգիայի արտադրության հաշվեկշռի վրա բացասական ազդեցությունն ունեցող հիմնական հանգամանքները

2021թ. ՅԱԷԿ-ի 141-օրյա կանգառի արդյունքում գործող սակագների հիմքում դրված հաշվեկշռի համեմատ նոր հաշվեկշռով ՅԱԷԿ-ից առաքվող էլեկտրաէներգիան նվազում է շուրջ 560 մլն կՎտժ-ով, որը պետք է ձեռք բերվի ՋԷԿ-երից

Արցախից կանխատեսվում էր ներկրել 330 մլն կՎտժ էլեկտրաէներգիա, որը պատերազմական գործողությունների արդյունքում հնարավոր չէ եւ, այն պետք է ձեռք բերվի ՋԷԿ-երից

**Բացասական ազդեցություն՝
շուրջ 16.5 մլրդ դրամ կամ 3.41 դրամ/կՎտժ**





Էլեկտրաէներգետիկական համակարգի 2021թ. սակագների վերանայում

Արտարժույթների նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքի փոփոխությունները Էլեկտրաէներգետիկական համակարգի համար ունեցել են բացասական ազդեցություն **շուրջ 4.6 մլրդ դրամի** չափով (առանց ԱԱՀ-ի), որը վերջնական սպառողների վաճառքի միջին սակագինն **ավելացնում է 0.95 դրամ/կՎտժ-ով** (ներառյալ ԱԱՀ-ն): Սակագների հաշվարկներում հիմք է ընդունվել 2021 թվականի պետական բյուջով նախատեսված փոխարժեքները:

\$ — 476,46 —> 493,76

€ — 531,16 —> 574,79


¥ — 4,410 —> 4,712





Իրականացված Նոր կապիտալ ներդրումների փոխհատուցում՝ հաշվի առնելով կուտակված մաշվածությունը: Արդյունքում, մաշվածությունն ու շահույթն **ավելացել են շուրջ 7.16 մլրդ դրամի** չափով (առանց ԱԱՀ-ի), որը վերջնական սպառողների վաճառքի միջին սակագինն **ավելացնում է 1.48 դրամ/կՎտժ-ով** (ներառյալ ԱԱՀ-ն):


մլրդ դրամ





ՀՀ կառավարության երաշխիքով ստացված արտոնյալ վարկերի մայր գումարների մարման եւ սպասարկման ծախսերն **ավելացել են շուրջ 3.36 մլրդ դրամի** չափով (առանց ԱԱՀ-ի), որը վերջնական սպառողների վաճառքի միջին սակագինն **ավելացնում է 0.7 դրամ/կՎտժ-ով** (ներառյալ ԱԱՀ-ն):

մլրդ դրամ





ՁԵԿ-երին վաճառվող բնական գազի սակագնի փոփոխության արդյունքում վառելիքի ձեռքբերման ծախսն **ավելացել է շուրջ 2 մլրդ դրամի** չափով (առանց ԱԱՀ-ի)՝ վերջնական սպառողների վաճառքի միջին սակագինն **ավելացնելով 0.4 դրամ/կՎտժ-ով** (ներառյալ ԱԱՀ-ն):



242,1

\$/հազար խմ



255,91

\$/հազար խմ





01.11.2019-01.11.2020 ժամանակահատվածում Էլեկտրաէներգիայի արտադրության կանխատեսված եւ փաստացի հաշվեկշիռների շեղումների արդյունքում «Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի փաստացի եւ հաշվարկային սակագնային մարժաների տարբերության հետեւանքով ձեւավորվել է վնաս, որն ընկերության սակագնային մարժայի հաշվարկման մեթոդիկայի համաձայն՝ հաշվարկվել է շուրջ **5.5 մլրդ դրամ**:

Նշված ծախսը վերջնական սպառողների վաճառքի միջին **սակագինն ավելացնում է 1.14 դրամ/կՎտժ-ով** (ներառյալ ԱԱՀ-ն):

Էլեկտրական Էներգիայի **բաշխիչ ցանցում կորուստների կրճատման** արդյունքում **սվազել է** սպառողների պահանջարկի բավարարման համար **Էլեկտրաէներգիայի գնման ծախսը՝ շուրջ 8.5 մլրդ դրամով** (առանց ԱԱՀ-ի), որը վերջնական սպառողների վաճառքի միջին **սակագինը սվազեցնում է 1.76 դրամ/կՎտժ-ով** (ներառյալ ԱԱՀ-ն):



Էլեկտրաէներգետիկական համակարգի ընկերությունների բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ ծախսային հոդվածների վերլուծության արդյունքում գործող սակագների հաշվարկների համեմատ տեղի են ունեցել **շահագործման եւ պահպանման ծախսերի շուրջ 4.72 մլրդ դրամով (առանց ԱԱՀ-ի)** կրճատում, որը վերջնական սպառողների վաճառքի միջին սակագինը **նվազեցնում է 0.98 դրամ/կՎտժ-ով** (ներառյալ ԱԱՀ-ն):





Էլեկտրաէներգիայի սակագների վրա ազդող գործոնները

ԴՐԱԿԱՆ ԱՉԴԵՑՈՒՅՈՒՆ

ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱՉԴԵՑՈՒՅՈՒՆ

Արտադրության եւ սպառման կառուցվածքի փոփոխություն



+ 16.5 մլրդ դրամ
(+ 3.41 դրամ/կՎտժ)

Արտաբժույթների փոխարժեքների փոփոխություն



+ 4.6 մլրդ դրամ
(+ 0.95 դրամ/կՎտժ)

Նոր ներդրումների արդյունքում մաշվածության եւ շահույթի ավելացում



+ 7.16 մլրդ դրամ
(+ 1.48 դրամ/կՎտժ)

Վարկերի մարման եւ սպասարկման ծախսերի փոփոխություն



+ 3.36 մլրդ դրամ
(+ 0.7 դրամ/կՎտժ)

ՁԷԿ-երին վաճառվող բնական գազի սակագնի աճ




+ 2.0 մլրդ դրամ
(+ 0.4 դրամ/կՎտժ)

ՋԷՑ-ի հաշվարկային եւ փաստացի սակագնային մարժայի տարբերություն



+ 5.5 մլրդ դրամ
(+ 1.14 դրամ/կՎտժ)

Բաշխիչ ցանցում Էլեկտրաէներգիայի կորուստների կրճատում



- 8.5 մլրդ դրամ
(- 1.76 դրամ/կՎտժ)

Շահագործման եւ պահպանման ծախսերի կրճատում



- 4.72 մլրդ դրամ
(- 0.98 դրամ/կՎտժ)

ԸՆԴԱՄԵՆԸ ազդեցությունը



+ 25.9 մլրդ դրամ
(+ 5.34 դրամ/կՎտժ)



Էլեկտրաէներգետիկական համակարգի ֆինանսական ճեղքվածքի փոխհատուցման աղբյուրները

Ֆինանսական ճեղքվածք՝ 25.9 մլրդ դրամ


ԻԻՅ-ՀՀ 3-րդ Էլեկտրահաղորդման գծի վարկի մասով առ 01.02.2021թ. սակագնում կուտակված գումար՝
- 6.7 մլրդ դրամ

ՀՀ կառավարության կողմից ՀԱԷԿ-ի շահագործման ժամկետի երկարաձգման վարկի մասով մասնակի վերաֆինանսավորում՝
- 8.2 մլրդ դրամ

Մնացորդ՝ 11 մլրդ դրամ

Միջին կշռված սակագնի աճ՝ 2.27 դրամ/կՎտժ (ներառյալ ԱԱՀ-ն)

Ներքին շուկայում վաճառվող էլեկտրական էներգիայի սակագների կառուցվածքը





Էլեկտրաէներգետիկական համակարգի 2021թ. սակագների վերանայում

Արտադրող կայանների եւ ծառայություններ մատուցողների առաջարկվող սակագները (առանց ԱԱՀ-ի)

Անվանում	Դրույթ	Հաշվարկային միադրույթ գին
ՀԱԷԿ	4.448 դր/կՎտժ	12.322 դր/կՎտժ
	5016.42 դր/կՎտ/ամիս	
Քոնսուլտինգային ծախսեր կասկած	8.446 դր/կՎտժ	18.759 դր/կՎտժ
	2694.09 դր/կՎտ/ամիս	
ՄԷԿ	4.913 դր/կՎտժ	17.534 դր/կՎտժ
	1021.84 դր/կՎտ/ամիս	
Երևանի ՁԷԿ	1.880 դր/կՎտժ	23.241 դր/կՎտժ
	4418.18 դր/կՎտ/ամիս	
Հրազդանի ՁԷԿ	33.575 դր/կՎտժ	35.826 դր/կՎտժ
	350.61 դր/կՎտ/ամիս	
Փոքր կայաններ և ներկրում	22.786 դր/կՎտժ	22.786 դր/կՎտժ
Հաղորդող	0.38322 դր/կՎտժ	0.38322 դր/կՎտժ
Համակարգի օպերատոր	130.0636 մլն դրամ/ամիս, 0.2433 դր/կՎտժ	
Շուկայի օպերատոր	26.2280 մլն դրամ/ամիս, 0.0491 դր/կՎտժ	





ՀԵՑ-ի կողմից Էլեկտրաէներգիայի բաշխման ծառայության մատուցման սակագները (առանց ԱԱՀ-ի)

№	Բաշխման ցանցին միացման լարման մակարդակը	Առաջարկ (01.02.2021-01.02.2022)	
		դրամ/կՎտժ (առանց ԱԱՀ-ի)	դրամ/կՎտժ (Ներառյալ ԱԱՀ-ն)
1	110 կՎ լարմամբ միացման համար	1.389	1.667
2	35 կՎ լարմամբ միացման համար	2.647	3.176
3	6(10) կՎ լարմամբ միացման համար	6.864	8.237
4	0.38(0.22) կՎ լարմամբ միացման համար	15.326	18.391





Ներքին շուկայում վաճառվող էլեկտրական էներգիայի առաջարկվող սակագներ (ներառյալ ԱԱՀ-ն)

№	Վերջնական սպառողների խմբերը	Սպառում 01.02.2021- 01.02.2022	Գործող սակագին	Առաջարկ (01.02.2021-ից)	Տարբերությ ուն
		մլն կՎտժ	դրամ/կՎտժ	դրամ/կՎտժ	դրամ/կՎտժ
1	ՀՀ կառավարության 03.11.2016թ. №1122-Ն որոշման համաձայն՝ սոցիալապես անապահով ընտանիքներ	191.3			
	ցերեկային սակագին	152.2	29.99	29.99	0.00
	գիշերային սակագին	39.1	19.99	19.99	0.00
2	0,38 կՎ լարմամբ սնվող՝ ամսական մինչև 400 կՎտժ սպառում ունեցող բնակիչներ (բնակիչ-բաժանորդների շուրջ 90%-ը), բացառությամբ 1-ին կետով սահմանված սպառողներ	1,220.2			
	ցերեկային սակագին	981.4	44.98	44.98	0.00
	գիշերային սակագին	238.9	34.98	34.98	0.00
3	0,38 կՎ լարմամբ սնվող՝ ամսական 400 կՎտժ-ից ավել սպառում ունեցող բնակիչներ, բացառությամբ 1-ին կետով սահմանված սպառողների	538.2			
	ցերեկային սակագին	411.4	44.98	47.98	3.00
	գիշերային սակագին	126.8	34.98	37.98	3.00
4	0,38 կՎ լարմամբ սնվող այլ սպառողներ (բացառությամբ բնակչության)	1,058.1			
	ցերեկային սակագին	810.0	44.98	47.98	3.00
	գիշերային սակագին	248.1	34.98	37.98	3.00
5	6 (10) կՎ լարմամբ սնվող սպառողներ	1,670.3			
	ցերեկային սակագին	1,222.0	41.98	44.98	3.00
	գիշերային սակագին	448.3	31.98	34.98	3.00
6	35 կՎ լարմամբ սնվող սպառողներ	254.5			
	ցերեկային սակագին	173.4	35.98	38.98	3.00
	գիշերային սակագին	81.0	31.98	34.98	3.00
7	110 կՎ լարմամբ սնվող սպառողներ	868.9			
	ցերեկային սակագին	587.1	33.48	36.48	3.00
	գիշերային սակագին	281.7	29.48	32.48	3.00
ԸՆԴԱՄԵՆԸ		5,801.5	39.36	41.63	2.27



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ